ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարզի համայնքներում 2015թ. առաջին կիսամյակում կատարված գյուղատնտեսական աշխատանքների մասին

2015 թվականին վաղ գարնանային գյուղատնտեսական աշխատանքները սկսվեցին բնակլիմայական բարենպաստ պայմաններում: Պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է՝

/h	Պարարտանյութ, դիզ վառելանյութ, սերմացու	Անհրաժեշտ քանակությունը	Փաստացի ներկրվել է
1	**Ազոտական պարարտանյութ** 50կգ 1 պարկը 6000 դրամ /տոննա/	420	428 /+8
2	**Ֆոսֆորական պարարտանյութ** 50կգ 1 պարկը 7000 դրամ /տոննա/	6.75	10.65 /+3.9
3	**Կալիումական պարարտանյութ** 50կգ 1 պարկը 7000 դրամ /տոննա/	7.75	10.75 /+3.0
4	**Դիզելային վառելանյութ** 1լիտրը 350 դրամ / լիտր/	250500	31350
5	**Գարնանացան գարու սերմացու** 1կգ-ն 130դրամ /տոննա/	77.1	87.1 /+10.0
6	**Առվույտի սերմացու** 1կգ-ն 1500դրամ / տոննա/	2.65	2.65
7	**Եգիպտացորենի սերմացու** 1կգ-ն 350 դրամ / տոննա/	0.325	0.325
8	**Կորնգանի սերմացու** 1կգ-ն 370դրամ / տոննա/	9.4	5.6
9	**Աշնանացան ցորենի սերմացու 1կգ-ն 160դրամ/տոննա/**	84	

2014թ. աշնանը կատարվել է 1220հա աշնարացան ցորենի ցանք /+200հա/: Պետական աջակցության ծրագրերով իրացված պարարտանյութերի և սերմացուների աննախադեպ քանակությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը ժամանակին և ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան կատարելու և

ցանքատարածությունների ավելացման գործում: Ներկայացվում է ընթացիկ տարում կատարված ցանքատարածությունները ըստ մշակաբույսերի՝

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ցանքատարածությունները հա		
		2014թ	2015թ	Տարբ.
1	Հացահատիկ և հատիկաընդեղեն	2607	3258	651
2	Բանջարեղեն	407	485	78
3	Բոստան	36	38	2
4	Կարտոֆիլ	179	200	21
5	Կերային մշակաբույսեր	1442	1700	258
6	Տեխնիկական մշակաբույսեր	21	32	11
	Ընդ.ցանքատարածություն	4691	5713	1021

Ցանկանում եմ ընդգծել << գյուղատնտեսության նախարարության, մեր համայնքների ղեկավարների, ջրամատակարար կազմակերպության և մարզպետարանի համագործակցված ու արդյունավետ աշխատանքը, որի արդյունքում նախորդ տարվա համեմատ ունեցանք 1021 հա ավելի ցանքային տարածություն:

Գրեթե ամեն տարի մարզի գյուղատնտեսությանը մեծ վնաս են պատճառում բնական աղետները, / կարկուտ, ցրտահարություն, հեղեղ և այլն/

Մայիսի 15-ին կարկտահարության հետևանքով տուժել են Աղավնաձոր, Ռինդ և Չիվա համայնքների խաղողի ու պտղատու այգիները, ինչպես նաև հացահատիկի և բանջարային մշակաբույսերի սածիլված ցանքատարածությունները: Նշված համայնքներում վնասը կազմել է՝

Համայնք	Խաղող						Պտուղ				
	Շահառուների թիվը	Կարկտահարված տարածք հա	Միջին բերք.գ.	Համախառն բերքը տ	Կարկտահարման տոկոսը	Բերքի կորուստը տոննա	Կարկտահարված տարածք հա	Միջին բերք. գ.	Համախառն բերքը տ	Կարկտահարման տոկոսը	Բերքի կորուստ տոննա
Ռինդ	337	50.29	80	402.3	80	321.6	80.0	100	800.0	70.0	560.0
Աղավնաձոր	134	60.19	70	421.3	42.6	179.4	26.3	50	131.6	38.7	50.9
Չիվա	199	3.9	50	19.5	30	5.8	54.4	45	244.8	30.0	73.4
Ընդամենը՝	670	114.38	x	843.1	x	506.8	160.7	x	1176.4	x	684.3

Ընդամենը վնասը՝

	խաղող	**պտուղ**	**ընդամենը**
Ռինդ	321.6տ x 220դ=70.8մլն.դրամ	560.0տ x 200= 112.0 մլն.դրամ	182.8 մլն.դրամ
Աղավնաձոր	179.4տ x 200դ=35.9մլն.դրամ	50.9տ x 150դ=7.6 մլն.դրամ	43.5 մլն.դրամ
Չիվա	5.8տ x 200դ= 1.3մլն.դրամ	73.4տ x 200դ=14.6 մլն.դրամ	15.9 մլն.դրամ
Ընդամենը՝	**506.8տ 108.0մլն.դրամ**	**684.3տ 134.2 մլն.դրամ**	**242.2 մլն.դրամ**

Վերջին տարիներին մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ և Գետափ համայնքներում տեղադրվել են վեց հակակարկտային կայաններ, որոնց միջոցով հնարավոր չէ կարկտահարության դեմ պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնել:

<<Հայկական միրգ>> ծրագրով 2015թվականին մարզի համայնքներում հիմնվել է՝

1. Վերնաշեն 4.02 հա կեռասենու այգի
2. Խնձորուտ 5.2 հա կեռասենու այգի
3. Արին 17.2 հա ընկուզենու այգի
4. Ազատեկ 6.5հա բալենու, 2.7հա դեղձենու, 2.2 հա ընկուզենու 8.3 հա սալորենու այգիներ: / ընդամենը՝ 19.7հա/

Ընդհամենը հիմնվել է 46.12 հա պտղատու այգի

2015թ հունվարի 15-ից մինչև 2015թ ապրիլի 27-ը ACBA CREDIT AGRIKOLE բանկի կողմից մարզի 253 գյուղացիական տնտեսություններին է տրամադրվել 409080 դոլար գյուղատնտեսական նշանակության վարկեր՝ 14-24% տոկոսադրույքով և 3 տարի մարման ժամկետով, 336 գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորված վարկեր՝ 226մլն 200 հազար դրամ 14՝% տոկոսադրույքով և 2 տարի մարման ժամկետով:

Կառավարության կողմից սուբսիդավորվում է վարկերի 6%-ը:

Վարչության կողմից համակարգվել է անասնաբուժական ծառայությունների կողմից պետական պատվերով նախատեսված բուժպրոֆիլակտիկ միջոցառումների իրականացումը մարզի համայնքներում: Այս պահին մարզի տարածքում կարանտինային և սուր վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքեր վերջիններիս կողմից չի արձանագրվել: Ծառայության կողմից իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ՝ խոշոր եղջերավոր կենդանիների 83 334 գլուխ՝ սիբիրախտ, դաբաղ, էմկար, պաստերելիոզ և մանր եղջերավոր կենդանիների 22301 գլուխ՝ դաբաղ հիվանդությունների նկատմամբ: Բրուցելոզ հիվանդության նկատմամբ ախտորոշիչ միջոցառումների իրականացման արդյունքում հայտնաբերվել են բրուցելյոզով հիվանդ 77 գլուխ խոշոր և 191 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Օրենքով սահմանված կարգով իրականացվում է վտանգված անասնագլխաքանակի շարունակական առողջացումը:

2015թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 22 578 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 9643 (+142) գլուխ, մանր եղջերավոր՝ 24 824 գլուխ (+1789), խոզեր՝ 2048 գլուխ (+335), թռչուններ՝ 139 439 թև (+79 412) և մեղվաընտանիք՝ 21 855 փեթակ:

Անասնաբուծության զարգացման նպատակով մարզի Գնդեվազ համայնքում կառուցվել է խոշոր եղջրավոր անասունների տոհմաբուծական ֆերմա և կաթի մթերման ու վերամշակման մեկ ձեռնարկություն, նախատեսված 350 գլուխ կաթնատու կովի և 150 գլուխ երինջի համար:

Վարչության կողմից համակարգվում է <<Եղեգնաձոր>> ՋՕԸ –ի կողմից ոռոգման ջրի անխափան մատակարարման, առաջացած խնդիրների լուծման ու վերացման, միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերանորոգման, ինչպես նաև

ոռոգման ջրի մատակարարման պլան ժամանակացույցի խախտումները նվազագույնի հասցնելու աշխատանքները: Գյուղատնտեսության զարգացման կարևոր նախադրյալներից է նաև արտադրության կազմակերպման մեքենայացումը, մարզի համայնքներում առկա մեքենաները, տրակտորները /420,որից սարքին՝ 360/ և գյուղատնտեսական գործիքները հիմնականում ֆիզիկապես ու բարոյապես մաշված են, վերջին երեք տարիներին գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող ընկերությունների կողմից ձեռք են բերվել ընդամենը 22 միավոր տարբեր հզորության տրակտորներ իրենց գյուղ. գործիքներով, իսկ եղած քանակությունը բավարար չէ ագրոտեխնիկական կանոնների պահանջներին համապատասխան գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար:Մարզում առկա 24 հացահատիկահավաք կոմբայներից սարքին է միայն 13-ը:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն